## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 26 հունվարի 2017թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան

Հանձնաժողովի անդամներ՝ Բ. Մաթևոսյան, Հ. Կյուրեղյան, Վ. Համբարյան, Ա. Մարկոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան

### Օրակարգ
### հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. **Տեղեկություն «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին.**

«Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1»** ծածկագրով «Վառելիք»-ի մրցույթի հայտերը բացվել են հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրը՝ **2017 թվականի հունվարի 26-ին, ժամը 11:00-ին,** ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները.**

«Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1»** ծածկագրով «Վառելիք»-ի գնման ընթացակարգին, որոնք խմբավորված են 3 չափաբաժիններում, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցների անվանումները | Հասցե, հեռ. |
|---|---|---|
| 1 | «Մաքսիուր» ՍՊԸ | Ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. (010) 52-67-51 |
| 2 | «Ֆլեշ» ՍՊԸ | Ք. Երևան, Ե. Կողբացու 30, հեռ. (010) 52-42-33 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

3. **Տեղեկություն «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով մրցույթի գնման առարկայի 3 չափաբաժինների ընդհանուր նախահաշվային գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /Այսուհետ Կարգ/ 44-րդ կետի առաջին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Չ/հ | Քանակ | Գնման առարկայի միավորի գինը (ՀՀ դրամ) | Գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Բենզին ռեգուլյար | լիտր | 600 | 330 | 198000 |
| 2. | Բենզին պրեմիում | լիտր | 3000 | 350 | 1050000 |
| 3. | Դիզելային վառելիք, ամառային | լիտր | 100 | 310 | 31000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

4. **Տեղեկություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին.**

**«Մաքսիուր» և «Ֆլեշ» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

5. **Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**«Մաքսիուր» և «Ֆլեշ» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

6. **Տեղեկություն մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին.**

Հայտարարվեց հայտ ներկայացրած մասնակցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը.

(ՀՀ դրամ)

| Հ/հ | Մասնակցների անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | Ընդամենը | ԱԱՀ | Առաջարկված Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Մաքսիուր» ՍՊԸ | 155623.2 | 3826.8 | 159450 | 31890 | 191340 |
| | «Ֆլեշ» ՍՊԸ | 155200 | 4800 | 160000 | 32000 | 192000 |
| 2. | «Մաքսիուր» ՍՊԸ | 810568 | 19932 | 830500 | 166100 | 996600 |
| | «Ֆլեշ» ՍՊԸ | 824500 | 25500 | 850000 | 170000 | 1020000 |
| 3. | «Մաքսիուր» ՍՊԸ | 29968.4 | 611.6 | 30580 | - | 30580 |
| | «Ֆլեշ» ՍՊԸ | 31040 | 960 | 32000 | - | 32000 |

**Հանձնաժողովը որոշեց.**

1. **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում 1,2,3 չափաբաժինների մասով՝ «Մաքսիուր» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ տեղը զբաղեցնող է ճանաչվում 1,2 չափաբաժինների մասով՝ «Ֆլեշ» ՍՊԸ -ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտեր և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:**

2. **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Ֆլեշ» ՍՊԸ -ի հայտը մերժվում է, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցը:**

3. **Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

7. **Տեղեկություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված

որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը[1]:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

8. **Տեղեկություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.**

**«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1»** ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա **2016 թվականի փետրվարի 2-ին, ժամը 11:00-ին**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** **Հ. Սաքեյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** **Բ. Մաթևոսյան**

**Հ. Կյուրեղյան**

**Վ. Համբարյան**

**Ա. Մարկոսյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** **Տ. Մարգարյան**

---

[1] Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում: